ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՄԻ ԳՈՐԾՈՆԻ ՄԱՍԻՆ

ՄԵԼԻՔ-ՔԱՐԱՄՅԱՆ Ա. Ա.

Կորպորատիվ մակարդակներում համատեղ տնտեսական գործունեությունը լայն տարածում է գտել հատկապես 1970-ական թվականներից սկսած, որ զուգորդվել է միջազգային մրցակցության զգայնության բարձրացման և գլոբալացման գործընթացներով: Անվիճելի է, որ զարգացող և, հատկապես, անցումային տնտեսության երկրների համար ռազմավարական կարևոր խնդիր է նշված գործընթացներին հնարավորինս ինտեգրումը: Միջազգային համատեղ ձեռնարկատիրական գործունեությունը նշված ինտեգրման հիմնարար գործոններից է, որի հիմքում պետք է պատշաճ կարևորություն տալ նոր տեխնոլոգիաների հիման վրա ստեղծվող համատեղ ձեռնարկությունների կայացման և զարգացման խնդիրներին: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից մշակված նյութերից մեկում նշվում է. «Համատեղ ձեռնարկությունների ձեռքբերումները հատկապես ինտենսիվ են այն ոլորտներում, որտեղ ավելանում են ինովացիաների վրա կատարված ծախսերը և կամ մրցակցությունը»[1]: Մեկ այլ հետազոտության մեջ ցույց է տրվել, որ միջազգային համատեղ ձեռնարկությունները դիտվում են որպես տեղական ձեռնարկություններին արժեքավոր տեխնոլոգիաների փոխանցման և ինովացիոն գործունեության արդյունավետ կազմակերպման ազդեցիկ գործոն[2]:

Շուկայական տնտեսավարման արդի հիմնարար չափորոշիչներից անվիճելի են համարվում նոր տեխնոլոգիաների վրա հիմնված գործընթացները: Վերջիններիս տնտեսագիտական հայեցակետն ինովացիոն գործունեությունն է, որն ամենաընդհանուր կերպով կարելի է սահմանել որպես արտադրության և ծառայությունների ոլորտում նոր մտահղացումների կազմակերպման, նյութականացման և սպառման գործընթաց:

Ներկայումս երկրների տնտեսական աճը մեծ չափով բնութագրվում է գիտատեխնիկական գործունեության ձեռքբերումների, մտավոր սեփականության օբյեկտների գեներացման, նոր ու գործնականորեն կիրառելի արժեքների ստեղծման գործոններով: Հայտնի է, որ աշխարհի համախառն ներքին արդյունքի շուրջ 80%-ը ձևավորվում է ինովացիոն գործունեության շնորհիվ[3]: Այն կարելի է դիտել իբրև գործընթաց, որը ձևավորվում է նորույթի բացահայտման, նախագծման, մշակման, արտադրության և իրացման փուլերով: Առաջին երեք

---

[1] *Competition Issues In Joint Ventures, OECD, Directorate for Financial, Fiscal And Enterprise Affairs Committee on Competition Law and Policy, 2001, p. 9.*

[2] **Lyles M.** *and* **Salk J.,** *Knowledge Acquisition from Foreign Parents in International Joint-Ventures: An Empirical Examination in the Hungarian Context (Journal of International Business Studies, 1996, N 27).*

[3] **Фролов Ю. Н.,** *Государственное планирование науки, М., 1998, с. 3.*

փուլերն իրականացվում են հիմնարար ու կիրառական հետազոտությունների և փորձանախագծային աշխատանքների միջոցով: Իրացման փուլն այլ կերպ կարելի է որակել որպես շուկայացման գործընթաց, երբ արդեն սպառման ենթակա նորույթը ներկայացվում է շուկա: Շուկայացումն ինովացիոն գործընթացի ամենաառանցքային խնդիրներից է, որի արդյունքներից է կախված ինովացիոն ծրագրի տնտեսական հաջողությունը, և որտեղ լավագույն փորձը ապացուցել է արհեստավարժ կառավարիչների թիմի անհրաժեշտությունը[4]: Ակնհայտ է, որ նկարագրված շղթայում, կախված դրա բազմաբնույթ փուլերից, ներառված են մի շարք մարդկային ռեսուրսներ, որոնց ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել հետևյալ դասակարգմամբ.

- գիտնականներ, գիտահետազոտական խմբեր.
- ինժեներատեխնիկական աշխատանքներ իրականացնողներ.
- փորձագետներ, մտավոր սեփականության գնահատողներ.
- արհեստավարժ ինովացիոն կառավարիչներ:

Մյուս կողմից, շուկայական տնտեսության պայմաններում այդ գործընթացի անմիջական իրականցնողները ձեռնարկություններն են: 2000 թ. Եվրամիության երկրներում արդյունաբերական ձեռնարկությունների 47%-ը ունեցել է ինովացիոն ուղղվածություն: 1998-2000 թթ. Եվրամիության համապատասխան գործընթացներում ներառված արդյունաբերական ձեռնարկություններում գրանցվել է շրջանառության 19% աճ: Նույն ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման ոլորտի ինովացիոն ձեռնարկություններում գրանցվել է շրջանառության 18% աճ[5]: Հատկապես վերջին տասնամյակում, արևմտյան, ինչպես նաև ռուսաստանյան տնտեսագետները կատարել են ինովացիոն ձեռնարկությունների տեսագործնական խնդիրներին առնչվող մի շարք ուսումնասիրություններ[6]: Այնուամենայնիվ, հատկապես ԱՊՀ երկրներում համատեղ ինովացիոն ձեռնարկություններին վերաբերող տեսագործնական խնդիրները պատշաճ ուշադրության չեն արժանացել:

Ձեռնարկությունը գործնականում կարող է ամբողջ ինովացիոն գործընթացին ինտեգրվել. սկսած նորույթի մտահղացման նախագծումից մինչև դրա շուկայացումը: Այս տեսանկյունից, շուկայական տնտեսության պայմաններում այդ գործընթացի իրականացումը ենթադրում է ինովացիոն ձեռնարկության հետ վերը ներկայացված սուբյեկտների բազմաստիճան գործակցում: Ինովացիոն գործընթացում համատեղ ձեռնարկությունների դիրքի առանձնահատկությունները

---

[4] **Клейтон К., Рейнор М.,** *Решение проблемы инноваций в бизнесе. Как создать растущий бизнес и успешно поддерживать его рост (Бизнес Букс, М., 2004, с. 18-22).*

[5] *Innovation in Europe, Results for the EU, Iceland and Norway, Data 1998–2001 (Luxemburg, Office for Official Publications of the European Communities, 2004, p. 52, 59).*

[6] **Czarnitzki D., Kraft K.,** *On the Profitability of Innovative Assets, ZEW, Center for European Economic Research, May 2004., "Trends in European Innovation Policy and the Climate for Innovation in the Union" Commission of the European Communities, Brussels, 2000., Olav Nas S., Leppalahti A., "Innovation, Firm Profitability and Growth", (STEP Group, OSLO, May 1997.),* **Аньшин В., Филин С.**, *Менеджмент инвестиций и инноваций в малом венчурном бизнесе, М., 2003.*

պատկերող ստորև բերված գծապատկերում ցույց ենք տվել, որ համատեղ ինովացիոն ձեռնարկությունը համապատասխան գործընթացներին էապես ավելի դյուրին է ինտեգրվում այն պարզ պատճառով, որ համատեղ գործընկերները, որպես կանոն, ապահովում են ռեսուրսների հնարավորինս միասնական առկայությունը ձեռնարկության ակտիվներում:



Համատեղ ձեռնարկության կազմավորումը նախ և առաջ ենթադրում է գործարքի մասնակից երկու կամ ավելի ձեռնարկությունների կողմից փոխլրացնող պայմանների ապահովում: Ա. Յանը և Բ. Գրեյը ցույց են տվել, որ զարգացող երկրներում արտասահմանյան համատեղ գործընկերոջ առկայությունը շատ հաճախ ապահովում է արժեքավոր առավելություններ, որոնցից են առաջավոր և շուկայացվող տեխնոլոգիաներն արտոնագրերի ու «նոու հաուի» տեսքով, ար-

տադրական հմտությունները և արհեստավարժ կառավարման փորձը[7]: Միևնույն ժամանակ, համատեղ ձեռնարկության արտասահմանյան գործընկերը կարող է շահագրգիռ լինել նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությամբ, բարձր շահութաբերության մակարդակով, հարկային դաշտի արտոնություններով, աշխատուժի շուկայի հագեցվածությամբ և այլն: Այս տեսանկյունից, համատեղ ինովացիոն ձեռնարկությունները կարող են գործունեության արդյունքների էական արդյունավետություն ապահովել հատկապես այն պատճառով, որ հնարավորություն է ստեղծվում մեկ ձեռնարկության շրջանակներում համակցել վերը ներկայացված ինովացիոն գործընթացի մասնակից-սուբյեկտների մի շարք գործառույթներ, ինչը և պատկերված է վերոբերյալ գծանկարում: Դրանում մասնակից սուբյեկտները համատեղ ինովացիոն ձեռնարկության հետ կապվում են միասնական կապով՝ ի տարբերություն ոչ համատեղ ձեռնարկության, որտեղ, որպես կանոն, ինովացիոն գործընթացի սուբյեկտների գործառույթների էական մասն ապահովվում է միայն էկզոգեն աղբյուրներից, ինչը նշանակում է ավելի թանկ տեխնոլոգիաներ, ավելի թանկ արհեստավարժ կառավարիչներ և այլն: Այդ նպատակով ձեռնարկությունն ինովացիոն գործընթացի սուբյեկտների հետ կապվում է առանձնացված, ոչ միասնական կապերով:

Ներկա փուլում Հայաստանում համատեղ ինովացիոն ձեռնարկությունների զարգացումն էապես կխթանի ձեռնարկատիրական դաշտի ակտիվացումը, ինչպես նաև մեծ չափով կապահովի միջազգային շուկաներին համահունչ կառավարման ոլորտի զարգացման անհրաժեշտ պայմաններ: Առանց նման ճանապարհով արտասահմանյան փորձառու և տընտեսապես հզոր գործընկերների ներգրավման, Հայաստանում էապես դրժվար կլինի ակտիվացնել խնդրո առարկա գործընթացները՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ մոտ ապագայում անիրական է ինովացիոն ծրագրերի ֆինանսավորման նպատակով վենչուրային կապիտալի ներգրավումը:

ОБ ОДНОМ КЛЮЧЕВОМ ФАКТОРЕ В ДЕЯТЕЛЬНОСТИ СОВМЕСТНЫХ ПРЕДПРИЯТИЙ

МЕЛИК-КАРАМЯН А. А.

Резюме

Деятельность совместных предприятий особо эффективна на фоне инновационной деятельности. Их параллельное и интегрированное развитие особо важно для стран с переходной экономикой. Анализ исследований показывает, что в нашей республике данная проблема является малоисследованной, а посему важен поиск путей развития инновационных совместных предприятий в Республике Армения. Построение модели вышеназванного эффекта выявляет результативность инновационного совместного предприятия как прямого участника в инновационном процессе.

[7] **Yan A.** *and* **Gray B.**, *Bargaining Power, Management Control and Performance in U.S.-Chinese Joint Ventures: A Comparative Case Study (*Academy of Management Journal*; 1994, N 6, p. 1478-1517).*